ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 85 - Ա
26 մարտի 2015 թ.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

Հաստատել՝

1.
   1) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2015 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:
   2) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2015 թվականի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի:
   3) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2015 թվականի մարզային առաջնության անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015 թվականի մարտի 26-ի
N 85-ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Բաղալյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, /նախագահ/

Ասատրյան Ի. – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Չարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Պողոսյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ

Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Առաքելյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ

Խլղաթյան Խ. - <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ/

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Խլղաթյան

Հավելված N2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2015 թվականի մարտի 26-ի

N 85-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2015 թվականի մարզային առաջնության /այսուհետ՝ մարզային առաջնություն/ նպատակն ու խնդիրներն են՝ նպաստել

- համայնքներում շախմատ մարզաձևի մասսայական զարգացմանը
- շնորհալի մարզիկների մարզական կատարելագործմանը
- հանրապետական կիսաեզրափակիչ մրցումներին մասնակցության ապահովմանը
- Հայոց ցեղասպանության հանրահռչակմանը

2. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Մարզային առաջնության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

3. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Մարզային առաջնությունը անցկացվում է ՖԻԴԵ-ի կանոնակարգի համաձայն, երկու փուլով՝ տարածքային և մարզային: Մարզային առաջնությունն անհատական է: Մարզային առաջնությունն անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը: Տարածքային փուլի մրցումներում 1-ին, 2-րդ և 3–րդ տեղերը գրաված շախմատիստները մասնակցում են մարզային փուլին: Մարզային փուլի մրցումները անցկացվում է շվեյցարական մրցակարգով: Յուրաքանչյուր խաղացողի տրվում է 25 րոպե՝ մեկ խաղափուլի համար: Մարզային առաջնությունում առաջին և երկրորդ տեղեր գրաված շախմատիստները իրավունք են ստանանում մասնակցելու շախմատի մեծահասակների հանրապետական մրցումներին:

4. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Տարածքային փուլի մրցումները անցկացվում են 2015 թվականի ապրիլի 6-16-ը՝ Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի, Մարտունու, Վարդենիկի, Վարդենիսի, Ճամբարակի, Սևանի և Սարուխանի մասնաճյուղերում, իսկ մարզային փուլի մրցումները՝ 2015 թվականի ապրիլի 29-30-ը, Գավառի շախմատի տանը: Մրցումների սկիզբը ժամը 11:00-ին:

5. ԾԱԽՍԵՐԸ

Մարզային առաջնության մասնակցության հետ կապված ծախսերը հոգում է գործուղող կողմը:

6. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Մարզային առաջնությունում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղ գրաված շախմատիստները պարգևատրվում են հավաստագրերով և հուշանվերներով:

7. ՀԱՅՏԵՐԸ

Մարզային առաջնության մարզային փուլի մասնակցության նախնական հայտերը ներկայացվում են մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն՝ մրցումներից 3 օր առաջ, իսկ անվանական հայտերը՝ մրցավարական հանձնաժողովին՝ մրցումների օրը:

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Խլղաթյան

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015 թվականի մարտի 26-ի
N 85-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Չարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ /պատասխանատու/

Հայրապետյան Մ. - ՀՀ Գեղարքունիքի մարզում Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ /գլխավոր մրցավար, համաձայնությամբ/

Սարգսյան Կ. - Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի մասնաճյուղի մարզիչ /քարտուղար, համաձայնությամբ/

Հայրապետյան Ա. – Հայաստանի շախմատի ակադեմիայի Մարտունու մասնաճյուղի մարզիչ / մրցավար, համաձայնությամբ /

Վարդանյան Ա. – Հայաստանի շախմատի ակադեմիայի Սևանի մասնաճյուղի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ /

Պետրոսյան Մ. – Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիսի մասնաճյուղի մարզիչ / մրցավար, համաձայնությամբ /

Մարտիրոսյան Հ. – Հայաստանի շախմատի ակադեմիայի Ճամբարակի մասնաճյուղի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ /

Արզումանյան Ս. - Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիկի մասնաճյուղի մարզիչ / մրցավար, համաձայնությամբ /

Թորոյան Գ. - Հայաստանի շախմատի ակադեմիայի Սարուխանի մասնաճյուղի մարզիչ / մրցավար, համաձայնությամբ /

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Խլղաթյան